

**Հաշվետվություն ՀՀ Արագածոտնի մարզի գենդերային քաղաքականության
2013 թվականի միջոցառումների վերաբերյալ**

ՀՀ Արագածոտնի մարզի գենդերային քաղաքականության 2013 թվականի միջոցառումների երկրորդ կետի շրջանակներում մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը՝ „Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն,, հասարակական կազմակերպության հետ համագործակցելով, մարզի հինգ համայնքում՝ Օշականում, Սասունիկում, Դավթաշենում, Ոսկեվազում, Ագարակում, կազմակերպել են հանդիպում-քննարկումներ կանանց իրավունքների թեմայով:

Բոլոր մասնակիցներին տրամադրվել է իրավական տեղեկատու կանանց համար և այլ տեղեկատվական նյութեր: